

Խ Ր Ո Ն Ի Կ Ս.

ՎՆԱՍԱՐԱՐ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԽՄԲԻ
ՁԵՐԲԱՎԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ ժամանակ առաջ պետական անվտանգության օրգանների կողմից հայտնաբերվեց բժիշկների տեղորոշատական մի խումբ, որոնք իրենց նպատակ էին դրել վնասարարական բուժման միջոցով կրճատել Սովետական Միության ակտիվ գործիչների կյանքը:

Այդ տեղորոշատական խմբի մասնակիցների թվում են՝ թերապևտ-բժիշկ պրոֆեսոր Մ. Ս. Վովսին, թերապևտ-բժիշկ պրոֆեսոր Վ. Ն. Վինոգրադովը, թերապևտ-բժիշկ պրոֆեսոր Մ. Բ. Կոզանը, թերապևտ-բժիշկ պրոֆեսոր Բ. Բ. Կոզանը, թերապևտ-բժիշկ պրոֆեսոր Պ. Ի. Եզրոովը, քիմիկոս-կոորդի բժիշկ պրոֆեսոր Ա. Ի. Ֆելդմանը, թերապևտ-բժիշկ պրոֆեսոր Յա. Գ. Էտինգերը, ներոպաթոլոգ՝ բժիշկ պրոֆեսոր Ա. Մ. Գրինշտեյնը, թերապևտ-բժիշկ Գ. Ի. Մայորովը:

Փաստացի սովյայներով, հետազոտություններով, բժշկական էքսպերտների եզրակացություններով և ձեռքարկայվածների խոստովանություններով հաստատված է, որ հանցագործները, հանդիսանալով ժողովրդի թաքնված թշնամիներ, իրագործում էին հիվանդանոցի վնասարարական բուժում և քայքայում նրանց առողջությունը:

Քննությանը հաստատված է, որ տեղորոշատական խմբի մասնակիցները, օգտագործելով բժիշկների իրենց դիրքը և շարաշահելով հիվանդանոցի վնասումները, կանխամտածված կերպով, շարանենգործին քայքայում էին վերջիններին առողջությունը, դիտավորյալ կերպով անտեսելով էին հիվանդանոցի օբեկտիվ քննության տրվյալները, նրանց տալիս էին սխալ դիագնոզներ, որոնք չէին համապատասխանում նրանց հիվանդությունների իսկական բնույթին, իսկ ապա սխալ բուժումով սպանում էին նրանց:

Հանցագործները խոստովանեցին, որ իրենք, օգտագործելով ընկեր Ա. Ա. Ժղանովի հիվանդությունը, սխալ դիագնոզ են տվել նրա հիվանդությանը, թաքցնելով նրա սրտամկանի ինֆարկտը, նշանակել են այդ ծանր հիվանդությանը հակասող ռեժիմ և դրանով իսկ մեռցրել ընկեր Ա. Ա. Ժղանովին: Քննությանը պարզվել է, որ հանցագործները կրճատել են նաև ընկեր Ա. Ս. Շչերբակովի կյանքը, նրան բուժելիս սխալ կերպով կիրառել են ուժեղ ներգործող դեղորայք, սահմա-

նել նրա համար կործանարար ռեժիմ և այդպիսով նրան հասցրել մահվան:

Հանցագործ բժիշկները աշխատում էին առաջին հերթին քայքայել սովետական ղեկավար ռազմական կադրերի առողջությունը, նրանց դուրս բերել շարքից և թուլացնել երկրի պաշտպանությունը: Նրանք աշխատում էին շարքից դուրս բերել մարշալ Ա. Մ. Վասիլևսկուն, մարշալ Լ. Ա. Գոլոբովին, մարշալ Ի. Ս. Կոնևին, բանակի գեներալ Ա. Մ. Շտեմենկոյին, ադմիրալ Գ. Ի. Լեշենկոյին և ուրիշների: սակայն ձեռքարկայությունը խափանեց նրանց շարանենգ պլանները, և հանցագործներին չհաջողվեց հասնել իրենց նպատակին:

Հաստատված է, որ այդ մարդասպան բժիշկները, որոնք դարձել էին մարդկային ցեղի ճիմաղներ, ոտնակոխ էին արել գիտության սրբազան դրոշմը և պղծել էին գիտության գործիչների պատիվը, հանդիսանում էին օտարերկրյա հետախուզության վարձու գործակալները:

Տեղորոշատական խմբի մասնակիցների մեծ մասը (Մ. Ս. Վովսին, Բ. Բ. Կոզանը, Ա. Ի. Ֆելդմանը, Ա. Մ. Գրինշտեյնը, Յա. Գ. Էտինգերը և ուրիշներ) կապված էին «Ջոնսոն» հրեական միջազգային բուրժուա-նացիոնալիստական կազմակերպության հետ, որը ամերիկյան հետախուզության կողմից ստեղծվել է այլ երկրների հրեաներին իբր նյութական օգնություն ցույց տալու համար: Մինչդեռ իրականում այդ կազմակերպությունը ամերիկյան հետախուզության ղեկավարությունը վարում է լրտեսական, տեղորոշատական և այլ քայքայիչ լայն գործունեություն մի շարք երկրներում, այդ թվում նաև Սովետական Միությունում: Ձեռքարկայված վոլսին հետաքննության ժամանակ հայտարարեց, որ ինքը «ՍՍՌՄ-ի ղեկավար կադրերին բնաջնջելու վերաբերյալ» դիրեկտիվ էր ստացել ԱՄՆ-ից՝ «Ջոնսոն» կազմակերպությունից, Մոսկվայում գտնվող բժիշկ Շիմելիովիչի և հրեական հայտնի բուրժուական նացիոնալիստ Միխեյլսի միջոցով:

Տեղորոշատական խմբի մյուս մասնակիցները (Վ. Ն. Վինոգրադովը, Մ. Բ. Կոզանը, Պ. Ի. Եզրոովը) հանդիսանում են անգլիական հետախուզության հին գործակալներ:

Քննությունը կավարտվի մոտ ժամանակներս:

(ՏԱՍՍ)